ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10,
Հեռ. (0253) 6-16-62, www.odzun.am, Էլ. փոստ odzun.lori@mta.gov.am, odzun@bk.ru

թիվ 255-15
31 օգոստոսի 2015թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Ձեզ ենք ներկայացնում Օձուն գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի օգոստոսի 26-ի N 30-Ա, N 31-Ա և 32-Ն որոշումները:

Առդիր՝ չորս թերթ:

***Օձուն համայնքի** ղեկավար* *Ա. Տիտանյան*

Կատարող՝ Վ. Տիտանյան
հեռ. 0253-6-16-56

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 օգոստոսի 2015 թվական, N 30-Ա

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 12-րդ 12[1]-րդ և 14-րդ հոդվածների՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Օձուն գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի օգոստոսի 26-ի տասներորդ հերթական նիստի օրակարգը.

1) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2) ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (9)	Դեմ (չկա)	Ձեռնպահ (չկա)
Ա. ԱՂԻԿՅԱՆ		
Ս. ԱՍՐՅԱՆ		
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ		
Դ. ԴԱՎԹՅԱՆ		
Ս. ԴԱՎԹՅԱՆ		
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ		
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ		
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ		
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ		

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2015թ., օգոստոսի 26, ժ. 10:40
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 օգոստոսի 2015 թվականի, N 31-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Գույքահարկի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, ,,Հողի հարկի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. հիմք ընդունելով Օձուն համայնքի բնակիչների դիմումումները և Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը, Օձուն համայնքի մի շարք բնակիչների նկատմամբ սահմանել գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություններ հետևյալ չափերով.

1) Մհեր Արամի Աղվանյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 2, տուն 12, ՀՎՀՀ 13783121) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2012-2014 թվականների գույքահարկի ապառքներից՝ 18 300 (տասնութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և 2009-2014 թվականների գույքահարկի տույժից՝ 21 664 (քսանմեկ հազար վեց հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ գումարի չափով.

2) Ֆրեյդոն Հրաչյայի Խեչումյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 13, տուն 19, ՀՎՀՀ S0250313) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2014-2015 թվականների գույքահարկի ապառքներից՝ 27 450 (քսանյոթ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումարի չափով և 2014 թվականի գույքահարկի տույժից՝ 3 678 (երեք հազար վեց հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ գումարի չափով.

3) Գագիկ Ժորայի Զարգարյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 6, տուն 38, ՀՎՀՀ 13791214) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2014-2015 թվականների գույքահարկի ապառքներից՝ 13 800 (տասներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և 2014 թվականի գույքահարկի տույժից՝ 2774 (երկու հազար յոթ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ գումարի չափով.

4) Սամվել Սերգեյի Չոբանյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 8, շենք 9, բն. 19, ՀՎՀՀ 13605395) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2011-2015 թվականների գույքահարկի ապառքներից՝ 32 000 (երեսուներկու հազար) ՀՀ դրամ գումարի չափով և 2011-2014 թվականների գույքահարկի տույժից՝ 13 085 (տասներեք հազար ութսունհինգ) ՀՀ դրամ գումարի չափով.

5) Օձուն համայնքի հողի հարկ և գույքահարկ վճարողների հաշվառման ու հողի հարկի և գույքահարկի հաշվարկման ավտոմատացված տեղեկատվական համակարգի 13571321 ՀՎՀՀ-ով հարկատուին ազատել ավտոմեքենայի 2008-2015 թվականների գույքահարկի ապառքներից՝ 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով և 2008-2014 թվականների գույքահարկի տույժից՝ 18 438 (տասնութ հազար չորս հարյուր երեսունութ) ՀՀ դրամ գումարի չափով.

6) Դավիթ Կարլենի Կոստանդյանին (հասցե գ. Օձուն, Ամոջ, փողոց 2, տուն 3, ՀՎՀՀ 13795756) ազատել հողի հարկի տույժից՝ 7 064 (յոթ հազար վաթսունչորս) ՀՀ դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2015թ., օգոստոսի 26
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 օգոստոսի 2015 թվականի, N 32-Ն

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի երրորդ կետի, 54-րդ հոդվածի, ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1.Կատարել փոփոխություններ Օձուն համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 18-ի ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ,, N 71-Ն որոշման մեջ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (9) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՁԱՎԱՐՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
Ս. ՏԻՏԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2015թ., օգոստոսի 26
Գ. Օձուն

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2015 թվականի օգոստոսի 26-ի N 32-Ն որոշման

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի ավագանին որոշում է.

ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «ՀՀ Լոռու մարզի Օձուն գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի մասին» N 71-ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 11.2.1. գործառնական դասակարգման նախահաշվի 4891 հոդվածի գումարը պակասեցնել 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամով.

2. 09.4.1. գործառնական դասակարգման նախահաշվի 4729 հոդվածի ծախսն ավելացնել 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամով:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ